

3.— «Վասն աղաքից եւ փր
կուքեան թեւայ Ա.
բասու եւ Մարիան »:

4.— «Այս յիշատակս
րան Տն Յակոբայ
որ եղև ի անն խնորեայ »:

Այս արձանագրութիւններէն զատ, նոյն տեղը գտնուած են 16 դամբարաններ որոնցմէ երեքը անաղարտ մնացած են եւ իւրաքանչիւրին վրայ առանձին առանձին կը կարգացուին Ջոջիկ, Շուշան, Մարին անունները:

Կը փափաքինք վերեւ յիշուած մոզայիքներու ծագման մասին պատմական տեղեկութիւն մը տալով՝ նոյն արձանագրութեանց մէջ յիշուած քանի մը անձերու ինքնութիւնը ճշդիւ, որքան որ կարելի է: Այս հնութիւններով շատ զբաղած է յայտնի հնախօս Glermont-Ganneau (Archaeological Researches in Palestine, 1873-74. էջ 329-337), ուր յիշեալը շատ մը ենթագրութիւններէ յետոյ, կը կարծէ թէ թիւ 2 արձանագրութիւնը և մոզայիքը միաժամանակ չեն շինուած, քանի որ նոյն մոզայիքին արձանագրութիւնը առանձին մաս մը կը կազմէ եւ չի չարմարի մոզայիքի ամբողջութեան շինուածքին և դոյներուն. թիւ 1 և 2 մոզայիքներուն շինութիւնը ժամանակակից կը համարի, դատելով երկուքին ալ կերտուածքին և նկարագրութեան նոյնութեանէն, իսկ թիւ 3 և 4 մոզայիքները կը նկատէ յետին տարիներու շինուածք: Պէտք է գիտնալ թէ Քրիստոնէութենէ շատ յառաջ, մոզայիքի գործածութիւնը տեսակ մը զարգարանքի ձև մըն էր, սակայն անոր զիտութիւնը տակաւին նոր է: Զարգարանքի այդ եղանակը, ինչպէս կը տեսնուի, մարդիկ աւելի կը նախընտրէին քան որմնանկարներն և մագաղաթներն որ շատ չէին կրնար տակալ, մինչ մոզայիքը դարերով հողին տակ կրնար մնալ, առանց աւերուելու: Սև, կարմիր և սպիտակ գոյներով մոզայիքներ երբեմն կը զարդարէին Հռոմայեցւոց պարտէզները. իսկ բազմագունեանները կ'երեսնային Պոմպէի և Ալբրիկէի կողմերը: Քրիստոնէական մոզայիքներու վրայ գաղափար մը կազմելու համար պէտք է այցելել Ռավեննա, Հռովմ և Թեսաղոնիկէ: Քրիստոնէայք փոխ առնելով հեթանոսական մոզայիքները, անոնց տուին խորհրդաւոր մեկնութիւն մը: Եկեղեցեաց որմնրուն, յատակնև